ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024ԹՎԱԿԱՆԻ N 548-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596 հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանում Ավստրիայի դեսպանատան տեխնիկական համագործակցության գրասենյակի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի հայտը, **որոշում եմ.**

1. Հայաստանում Ավստրիայի դեսպանատան տեխնիկական համագործակցության գրասենյակին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ «Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման» աշխատանքների համար:

2. Հայաստանում Ավստրիայի դեսպանատան տեխնիկական համագործակցության գրասենյակը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

2024թ. դեկտեմբերի 30
գ.Տեղ